տելլիգէնտ դասը, իբրև տեղացի և տեղական հանգամանքներին ծանօթ, մեծ ծառայութիւններ կարող էր անել։ Կրթուած դասը, համարձակ կարող էր լուսաւորութեան ու քաղաքակրթութեան կարապետ հանդիսանալ, եթէ իւրաքանչիւր գաւառի Հայ ժողովրդի նիստն ու կացը, օդն ու ջուրը, հնութեան կնիք կրող սրբավայրերի, բերդերի ու ամրոցների այժմեան իսկական վիճակը լուսաբանէր և հրապարակ հանէր։ Բայց, տարաբախտաբար, մինչև այժմ մեր հասկացող և բանիմաց դասը (աննշան բացառութեանց մասին չէ մեր խօսքը) ոչ մի քայլ չէ արել այս մասին։ Այս իսկ պատճառով մեր մամուլը զրկուել է իւր հետաքրքրականնիւթերից, իսկ Հայ ժողովուրդը չարաչար տուժել է՝ մնալով խաւարամած տգիտութեան և յետադէմ անշարժութեան մահարեր քնի մէջ։ Ահաւասիկ ձեզ հզօր փաստեր։ Հայ ընթերցողը աւելի ճիշտ և շատ տեղեկութիւններ ունի մեզանից հազարաւոր ժողոովներով հեռու գտնուող ազգերի, որպիսիք են ծայրագոյն արևելքում— Քորէացիների, Ճափոնացիների, Մանջուրիացիների, Չինացիների, նոյն իսկ հարաւային Աֆրիկայում՝ մինչև անգամ վայրենի Զուլուսների ու անօրինակ հայրենասէր և քաջամարտիկ Բոէրների մասին, քան թէ՝ մի բուռն Ուտիացիների, որոնք դարերից ի վեր ապրում են մեր քթի տակ (Նուխու գաւառում)։ Թէպէտև մեր հին պատմաբան մատենագրներից միայն Մով. Կաղանկատուացին իւր պատմութեան էջերում շատ բաներ է ասել Ուտիացիների մասին, թէև մեր նորագոյններից